Ինքնազնահատման գործիք երիտասարդական քաղաքականության համար

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

The opinions expressed in this work are the responsibility of the authors and do not necessarily reflect the official policy of the Council of Europe.

All requests concerning the reproduction or translation of all or part of this document should be addressed to the Directorate of Communication (F-67075 Strasbourg Cedex or publishing@coe.int). All other correspondence concerning this document should be addressed to the Directorate General of Democracy – Youth Department (youth@coe.int).

Cover and layout: Documents and Publications Production Department (SPDP), Council of Europe

Photos: © Council of Europe

This publication has not been copy-edited by the SPDP Editorial Unit to correct typographical and grammatical errors.

© Council of Europe, September 2019
Printed at the Council of Europe

Ներածություն

Երիտասարդության ոլորտում Եվրոպայի խորհրդի միջկառավարական համագործակցության գերակայություններից մեկը երիտասարդական քաղաքականության մշակման խթանումն է և սատարումը:

Դա Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEJ) պարտականությունն է, որը համախմբում է Եվրոպական մշակութային կոնվենցիայի 50 մասնակից պետությունների՝ երիտասարդության հարցերի համար պատասխանատու նախարարությունների կամ մարմինների ներկայացուցիչների:

Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեն (CDEJ) նպաստում է երիտասարդական հատվածում կառավարությունների միջև համագործակցությանը և տրամադրում շրջանակ ազգային երիտասարդական քաղաքականությունների համեմատման, լավագույն գործելակերպերի փոխանակման և նորմատիվային փաստաթղթերի մշակման համար:

Այս համատեքստում CDEJ-ը պաշտոնապես ընդունել է երիտասարդական քաղաքականության մշակման համար նախատեսված սույն ինքնագնահատման գործիքը և կոչ արել անդամ պետություններին կիրառել և տարածել այն:

Ինքնագնահատման գործիքի նախապատմությունը

Եվրոպայի խորհրդի երիտասարդական հատվածի աշխատանքին հետևելու համար մշտադիտարկման մեխանիզմների բացակայության պայմաններում CDEJ-ը նկատել է, որ անդամ պետությունների կառավարությունների կողմից հետզհետե մեծանում էր «չափման» չափանիշների և ժամանակի ընթացքում արձանագրված առաջընթացի գնահատման մեթոդների մշակման պահանջարկը:.

Ուստի CDEJ-ը անհրաժեշտ է համարել մշակել երիտասարդական քաղաքականության որակի հենանիշերի խումբ, որոնք, ի թիվս այլնի, նաև հիմված կլինեն Նախարարների կոմիտեի ընդունած հանձնարարականների (կամ նպատակահարմարության դեպքում Եվրոպայի խորհրդի համապատասխան այլ մարմինների ընդունած փաստաթղթերի) վրա:

Նշված հենանիշերի հետ կապված՝ մշակվել է ստանդարտ ցուցանիշներով ինքնագնահատման գործիք, որպեսզի երիտասարդության հարցերի համար պատասխանատու իշխանությունները կարողանային բացահայտել երիտասարդական քաղաքականության մշակման ոլորտում ժամանակի ընթացքում գրանցած առաջընթացը և կատարել անհրաժեշտ շտկումներ կամ փոփոխություններ:

Այս գործիքը մշակվել է՝ օգնելու անդամ պետություններին ինքնուրույն գնահատել երիտասարդական քաղաքականության իրենց համապատասխանությունը ԵԽ չափանիշներին և հիմք ծառայելու երիտասարդական քաղաքականության ինքնուրույն մշակման համար:

Հանրային երիտասարդական քաղաքականության հիմնական սկզբունքները ըստ Եվրոպայի խորհրդի

Տարիների ընթացքում Եվրոպայի խորհուրդը մշակել է բազմազան սկզբունքներ, նպատակներ և արժեքներ, որոնք պետք է ընկած լինեն երիտասարդական քաղաքականության հիմքում:

Ըստ Եվրոպայի խորհրդի՝ ցանկացած հանրային երիտասարդական քաղաքականություն պետք է խթանի հետևյալ սկզբունքները[1]

a. Հնարավորության դեպքում կատարել երիտասարդներին ուղղված հետևողական և փոխամրապնդող նպատակային ներդրումներ՝ որդեգրելով հնարավորություններին, այլ ոչ թե խնդիրներին ուղղված մոտեցումներ՝ անհրաժեշտության դեպքում մշակելով, ի թիվս այլնի, երիտասարդական քաղաքականության չափանիշներ և գործիքներ,

b. Երիտասարդներին ներգրավել թե՛ երիտասարդական քաղաքականության ռազմավարական ձևակերպումների մշակման և թե՛ քաղաքականության իրականացման գործառնական արդյունավետության վերաբերյալ քննարկումների ոլորտ,

c. Ստեղծել ուսման, հնարավորությունների և փորձառության պայմաններ, որոնք երիտասարդներին հնարավորություն կապահովեն զարգացնել իրենց գիտելիքները, հմտությունները և կարողությունները՝ աշխատանքի շուկայում և քաղաքացիական հասարակությունում նրանց լիարժեք դերակատարությունը երաշխավորելու նպատակով,

d. Ստեղծել տվյալների հավաքագրման կայուն համակարգեր՝ երիտասարդական քաղաքականության արդյունավետությունը ի ցույց դնելու, ինչպես նաև որոշակի սոցիալական խմբերից, որոշակի ոլորտներում կամ որոշակի պայմաններում երիտասարդներին ծառայությունների արդյունավետ մատուցման առումով «քաղաքականության բացերի» մակարդակն ի հայտ բերելու նպատակով,

e. Դրսևորել ակնհայտ գոյություն ունեցող նշված «քաղաքականության բացերը» կրճատելու հանձնառություն:

Այս ընդհանուր սկզբունքները նկարագրում են, թե ինչպիսին պետք է լինի հուսալի քաղաքականությունը: Անդամ պետություններին նաև խրախուսվում է մշտադիտարկել իրենց իրականացրած քաղաքականության ազդեցությունը և պատրաստ լինել բարելավելու այն (կամ նույնիսկ հրաժարվել դրանից), եթե պարզվի, որ այն մասամբ կամ լիովին անարդյունավետ է:

Այնուամենայնիվ, ինքնագնահատման սույն գործիքը ուղղակիորեն չի սևեռվում երիտասարդական քաղաքականության վերոնշյալ հիմնական սկզբունքներին: Բոլոր այն շահակիր կողմերին, որոնք ցանկություն ունեն գնահատել այդ սկզբունքներին համապատասխանությունն իրենց սեփական համատեքստում (տեղական, տարածքային, ներպետական կամ եվրոպական մակարդակում), խրախուսվում է կիրառել որակի չափանիշների վերաբերյալ Եվրոպական երիտասարդական ֆորումի (ԵԵՖ) մշակած գործիքակազմը, որում ներառված են վերոնշյալ գրեթե բոլոր սկզբունքները[2]

Ինքնագնահատման այս գործիքի ուղղվածությունն այլ է, քանի որ այն կոնկրետ անդրադառնում է երիտասարդական քաղաքականության ԵԽ չափանիշներին համապատասխանությանը:

1. Աղբյուր՝ «Եվրոպայի խորհուրդը և երիտասարդական քաղաքականությունը. անդամ պետություններում երիտասարդական քաղաքականության մշակման համար աջակցություն, օգնություն և ռեսուրսներ (2016)»: Այս սկզբունքները վերցվել են երիտասարդական քաղաքականության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի տարբեր առանցքային փաստաթղթերից, այդ թվում՝ Երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեի (CDEJ) և Երիտասարդության հարցերով խորհրդատվական խորհրդի (CCJ) աշխատանքային լիազորությունների նկարագրերից, Երիտասարդական քաղաքականության ժողովածուից (2012)՝ մեջբերելով Երիտասարդական քաղաքականության ցուցանիշների վերաբերյալ Աշխատանքային խմբի 2003 թվականի եզրափակիչ զեկույցը:.
2. http://youthforum.org/8-standards.

Երիտասարդական քաղաքականության ԵԽ հիմնական չափանիշները

Ըստ CDEJ-ի՝ Եվրոպայի խորհրդի երիտասարդական քաղաքականության շրջանակը և ուղղվածությունը պետք է շարունակեն խթանել Կազմակերպության հիմնական արժեքները (մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և իրավունքի գերակայություն):

ԵԽ երիտասարդական քաղաքականության միջամտության վեց հիմնական ոլորտները (տե՛ս գծապատկերը) հիմնված են երիտասարդական ոլորտում Եվրոպայի խորհրդի որդեգրած չափանիշներին (հիմնականում Նախարարների կոմիտեի հանձնարարականներին): Դրանք պետք է հիմք ծառայեն Կազմակերպությունում երիտասարդական քաղաքականության հետագա ցանկացած զարգացման համար:



Ինչպե՞ս կիրառել ինքնագնահատման գործիքը երիտասարդական քաղաքականության համար

Ույն գործիքի նպատակն է օգնել անդամ պետություններին, ինչպես նաև այլ հանրային շահակիր կողմերի տարբեր մակարդակներում (տեղական, տարածքային, ներպետական, միջազգային) ինքնուրույն գնահատել ԵԽ չափանիշներին իրենց համապատասխանությունը՝ հիմնվելով միջամտության վեց ոլորտներին (մասնակցություն, տեղեկատվություն, ներառում, իրավունքների հասանելիություն, երիտասարդություն և շարժունակություն), որոնք կազմում են երիտասարդության ներգրավման և զարգացման ԵԽ քաղաքականության հիմքը:

Երիտասարդներին եվրոպական արժեքներին և, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքներին (մարդու իրավունքներ, իրավունքի գերակայություն, ժողովրդավարություն) հաղորդակցելու անհրաժեշտությունը նույնպես կենսական նշանակություն ունի: Եվրոպայի խորհուրդը մշտապես նպաստել է եվրոպական համընդհանուր արժեքների և Եվրոպային պատկանելիության զգացումի վրա հիմնված երիտասարդական քաղաքականության ընկալմանը: Ուստի եվրոպական այս հարթությունը պետք է խթանվի ԵԽ երիտասարդական քաղաքականության միջամտության բոլոր վեց ոլորտներում:

Միջամտության յուրաքանչյուր ոլորտի համար այս գործիքը տրամադրում է կոնկրետ և չափելի ցուցանիշներ, որոնցով անդամ պետությունները կարող են սկսել գնահատել Եվրոպայի խորհրդի հիմնական չափանիշների (մասնավորապես՝ հիմնականում Նախարարների կոմիտեի համապատասխան հանձնարարականների) կատարման առաջընթացը:

Ինքնագնահատման չափանիշներն այնուհետև կարող են օգնել գնահատել առաջընթացը՝ ըստ յուրաքանչյուր ցուցանիշի:

Ակնկալվում է, որ Եվրոպայի խորհրդում կիրառվող նմանօրինակ գործիքների նման[3], այս գործիքը հնարավորություն կընձեռի անդամ պետություններին

- բարձրացնել երիտասարդական քաղաքականության շուրջ իրազեկության և ընկալման մակարդակը,
- նախաձեռնել ընթացիկ իրականացման ելակետային ինքնագնահատում,
- օգնել սահմանել հետագա համապատասխանության ապահովմանը հասնելու անհրաժեշտ միջոցները,
- առաջ քաշել և տարածել լավ գործելակերպը,
- գնահատել առաջընթացը ժամանակի ընթացքում:

Անդամ պետություններին խրախուսվում է կիրառել այս գործիքը դինամիկ կերպով՝ անհրաժեշտության դեպքում պարբերաբար ինքնուրույն գնահատելով իրենց համապատասխանությունը Եվրոպայի խորհրդի չափանիշներին: Այս առումով գործիքը հնարավորություն է ընձեռում օգտվողներին արձանագրել դրական միտումները, որոնք կնպաստեն հետագա առաջընթացին, ինչպես նաև բարելավման և հնարավոր հետագա գործողությունների ոլորտները:

Այս գործիքը հիմնականում ուղղված է այն անդամ պետություններին, որտեղ երիտասարդական քաղաքականությունը ներպետական իրավասության խնդիր է: Այնուամենայնիվ, այս գործիքը հնարավոր է կիրառել նաև դաշնային պետություններում կամ երկրներում, որտեղ երիտասարդական քաղաքականության հարցերով զբաղվում են տարածքային և տեղական իշխանությունները, թեև դրա համար, հավանաբար, կպահանջվի լրացուցիչ համակարգում և թիմային աշխատանք համապատասխան տարբեր իրավասու իշխանությունների միջև:

Անդամ պետություններին խրախուսվում է այս գործիքը տրամադրել համապատասխան շահակիրներին (օրինակ՝ երիտասարդության հարցերի համար պատասխանատու նախարարություններին, այլ նախարարություններին, երիտասարդական կազմակերպություններին, երիտասարդական խորհուրդներին, տարածքային և տեղական իշխանություններին, երիտասարդության հետ աշխատող համապատասխան մասնագիտական խմբերին)՝ Եվրոպայում արժեքահեն երիտասարդական քաղաքականության մշակման խթանման նպատակով:

3. Հմմ. «Երեխաների մասնակցության գնահատման գործիք». ինքնագնահատման գործիք՝ գնահատելու անդամ պետություններին երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2012)2 հանձնարարականի կատարման առաջընթացը:

Եվրոպայի խորհրդի չափանիշների կիրառման առաջընթացի գնահատման հիմնական ցուցանիշների ամփոփում

Միջամտության ոլորտ	Համապատասխան ցուցանիշներ
Մասնակցություն	▶ Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է բոլոր երիտասարդների ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման գործում, հատկապես՝ իրենց վերաբերող որոշումների, և խրախուսում է նրանց ներգրավվել որպես ակտիվ քաղաքացիներ: ▶ Կառավարությունը ճանաչում է և սատարում երիտասարդական կազմակերպություններին, երիտասարդական խորհուրդներին և երիտասարդական այլ նախաձեռնություններին կամ կառույցներին:
Տեղեկատվություն	▶ Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է երիտասարդական համապատասխան տեղեկատվության տրամադրմանը և բոլոր երիտասարդների համար այդ տեղեկատվության հասանելիությանը թե՛ օֆլայն և թե՛ օնլայն ռեժիմներում: ▶ Երիտասարդական քաղաքականությունը ստեղծում է տեղեկատվության կառավարման կարողությունների զարգացման հնարավորություններ երիտասարդների համար:
Ներառում	▶ Երիտասարդական քաղաքականությունը խթանում է խոցելի իրավիճակներում գտնվող երիտասարդների ինտեգրումը կյանքի բոլոր ոլորտներում (այդ թվում՝ կրթության և վերապատրաստման, աշխատանքի ապահովման և զբաղվածության, բնակարանով ապահովման, առողջապահության, սպորտի, ժամանցի և մշակույթի): ▶ Երիտասարդական քաղաքականության նպատակն է կանխարգելել խտրականությունը, բռնությունը և բացառումը, որոնց բախվում են երիտասարդները՝ անկախ դրանց հիմքից[4]:
Իրավունքների հասանելիություն	▶ Երիտասարդական քաղաքականությունը խթանում է և դյուրին դարձնում իրավունքների արդյունավետ հասանելիությունը բոլոր երիտասարդների համար և վերացնում է հասանելիության ցանկացած իրավական, վարչական և փաստական խոչընդոտ: ▶ Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է երիտասարդների համար նրանց իրավունքների հասանելիության բարելավման համակարգված մոտեցմանը՝ համագործակցելով քաղաքականության բոլոր համապատասխան ոլորտներում միջազգային, ներպետական, տարածքային և տեղական մակարդակներում:
Երիտասարդական աշխատանք	▶ Երաշխավորվում է որակյալ երիտասարդական աշխատանքի ստեղծումը և հետագա զարգացումը և ակտիվ կերպով աջակցություն ստանում տեղական, տարածքային կամ ներպետական երիտասարդական քաղաքականությունում: ▶ Վճարովի և կամավոր հիմունքներով երիտասարդական աշխատանք կատարողների կարողությունները բարձրորակ երիտասարդական աշխատանքի ապահովման երաշխիքն են:
Շարժունակություն	▶ Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է երիտասարդության շարժունակությանը, մասնավորապես՝ Եվրոպային պատկանելիության զգացումը խթանելու նպատակով: ▶ Երիտասարդական քաղաքականությունը խթանում է երիտասարդության շարժունակության որակյալ ծրագրերի մշակումը:

4. Ինչպես հստակ նկարագրված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածում, կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով սահմանված ցանկացած այլ հիմքով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Իրավական հիմք
► Անդամ պետություններին երիտասարդների քաղաքացիական գործընթացներում և հասարակական կյանքում մասնակցության վերաբերյալ Նախարարների կոմիտեի Rec(2006)14 հանձնարարական ► Անդամ պետություններին տեղական և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցության վերաբերյալ Նախարարների կոմիտեի Rec(2004)13 հանձնարարական ► Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի՝ Տեղական և տարածքային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիա ► Անդամ պետություններին երիտասարդական քաղաքականության մշակման գործում պետական երիտասարդական խորհուրդների դերի վերաբերյալ Նախարարների կոմիտեի Rec(2006)1 հանձնարարական ► Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, հոդված 11 (հավաքների և միավորման ազատություն) ► Երեխաների և մինչև 18 տարեկան երիտասարդների մասնակցության վերաբերյալ հանձնարարական և դրա՝ Երեխաների մասնակցության գնահատման գործիք
Ցուցանիշ 1
Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է բոլոր երիտասարդների ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման գործում, հատկապես՝ իրենց վերաբերող որոշումների, և խրախուսում է նրանց ներգրավվել որպես ակտիվ քաղաքացիներ

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին[5]	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Երիտասարդական քաղաքականությունն օգնում է երիտասարդներին լինել ակտիվ քաղաքացիներ՝ մասնավորապես տրամադրելով նրանց ուսանելու հնարավորություններ և փորձառություն, ինչը կմեծացնի հասարակական կյանքին նրանց մասնակցությունը:				
Ստեղծվում են համապատասխան կառույցներ կամ մեխանիզմներ,որոնք հնարավոր են դարձնում երիտասարդների, այդ թվում՝ խոցելի իրավիճակներում գտնվողների մասնակցությունն իրենց առնչվող որոշումների կայացմանը և քննարկումներին:				
Խրախուսվում է տեղական, տարածքային և ներպետական մակարդակներում արդյունավետ և նորարարական մասնակցության լավ գործելակերպերի փոխանակումը և կիրառումը:				

5. Կամ «ընթացքում է»

Ցուցանիշ 2

Կառավարությունը ճանաչում է և սատարում երիտասարդական կազմակերպություններին, երիտասարդական խորհուրդներին և երիտասարդական այլ նախաձեռնություններին կամ կառույցներին:

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Երաշխավորվում է ընդհանուր նպատակներ հետամտելու համար այլոց հետ միավորվելու և մարմիններ ստեղծելու երիտասարդների իրավունքը:				
Երիտասարդական կազմակերպություններին, խորհուրդներին և նախաձեռնություններին տրամադրվում է տարածք, ֆինանսական միջոցներ և նյութական աջակցություն՝ նրանց անխափան և արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով:				
Տեղական, տարածքային և ներպետական մակարդակներում գոյություն ունեն անկախ երիտասարդական կազմակերպություններ և երիտասարդական խորհուրդներ, որոնք ակտիվ դեր են խաղում երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման ուղղությամբ:				

Դրական միտումներ, որոնք կնպաստեն հետագա առաջընթացին

Բարելավման և հնարավոր հետագա գործողությունների ոլորտներ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Իրավական հիմք

- Անդամ պետություններին երիտասարդական տեղեկատվության վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)8 հանձնարարական
- Անդամ պետություններին Եվրոպայում երիտասարդական տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ R (90) 7 հանձնարարական
- Եվրոպայի խորհրդի այլ համապատասխան նախաձեռնություններ՝
  - Համացանցի կառավարման ռազմավարություն 2016-2019թթ.
  - Անդամ պետություններին «ատելություն սերմանող խոսքի» վերաբերյալ Նախարարների կոմիտեի R(97)20 հանձնարարական
  - Ո՛չ ատելություն սերմանող խոսքին շարժում-քարոզարշավ

Ցուցանիշ 1

Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է երիտասարդական համապատասխան տեղեկատվության տրամադրմանը և բոլոր երիտասարդների համար այդ տեղեկատվության հասանելիությանը թե՛ օֆլայն և թե՛ օնլայն ռեժիմներում

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ են տրամադրվում տեղական կամ տարածքային մակարդակներում:				
Երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ են տրամադրվում ներպետական մակարդակում:				
Երիտասարդական տեղեկատվության ձևերը և խողովակները հարմարեցված են երիտասարդների նորահայտ կարիքներին և նախընտրություններին, ներառյալ՝ տեղեկատվական նոր տեխնոլոգիաներին:				
Երիտասարդները ներգրավված են երիտասարդական տեղեկատվության բովանդակության և խողովակների մշակման գործում:				
Երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունները հատուկ անդրադառնում են անապահով երիտասարդների կարիքներին:				

Ցուցանիշ 2

Երիտասարդական քաղաքականությունը ստեղծում է տեղեկատվության կառավարման կարողությունների զարգացման հնարավորություններ երիտասարդների համար

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Տեղեկատվական/թվային գրագիտությունը, ներառյալ՝ քննադատական մտածողությունը՝ որպես ֆորմալ կրթության մաս:				
Տեղեկատվական/թվային գրագիտությունը, ներառյալ՝ քննադատական մտածողությունը՝ որպես ոչ ֆորմալ կրթության մաս:				
Երիտասարդական քաղաքականությունը բարձրացնում է երիտասարդների իրազեկության մակարդակը այն վտանգների շուրջ, որոնց նրանք բախվում են որպես առցանց տեղեկատվության սպառողներ կամ ստեղծողներ, այդ թվում նաև կապված իրենց անձնական տվյալների պաշտպանության հետ:				

Դրական միտումներ, որոնք կնպաստեն հետագա առաջընթացին

Բարելավման և հնարավոր հետագա գործողությունների ոլորտներ

ՆԵՐԱՌՈՒՄ

Իրավական հիմք

- Իրավական հիմք Անդամ պետություններին անբարենպաստ շրջաններից երիտասարդների համար սոցիալական իրավունքների հասանելիության վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2015)3 հանձնարարական (ENTER)
- Անդամ պետություններին երիտասարդների համար իրավունքների հասանելիության վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2016)7 հանձնարարական

Ցուցանիշ 1

Երիտասարդական քաղաքականությունը խթանում է խոցելի իրավիճակներում գտնվող երիտասարդների ինտեգրումը կյանքի բոլոր ոլորտներում (այդ թվում՝ կրթության և վերապատրաստման, աշխատանքի ապահովման և զբաղվածության, բնակարանով ապահովման, առողջապահության, սպորտի, ժամանցի և մշակույթի)

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Երիտասարդական քաղաքականությունը առանձնահատուկ հաշվի է առնում խոցելի իրավիճակներում գտնվող երիտասարդների կարիքները:				
Որոշակի միջոցներ են նախատեսված բոլոր երիտասարդների ներառումը խթանելու նպատակով, հատկապես երիտասարդական աշխատանքի, շարժունակության, մասնակցության և տեղեկատվության միջոցով:				
Երիտասարդական քաղաքականությունը կամրջվում է կրթության քաղաքականությանը՝ երիտասարդների ներառումը խթանելու նպատակով:				
Երիտասարդական քաղաքականությունը կամրջվում է զբաղվածության քաղաքականությանը՝ երիտասարդների ներառումը խթանելու նպատակով:				
Երիտասարդական քաղաքականությունը կամրջվում է բնակարանային և առողջապահական քաղաքականություններին՝ երիտասարդների ներառումը խթանելու նպատակով:				

Ցուցանիշ 2

Երիտասարդական քաղաքականության նպատակն է կանխարգելել խտրականությունը, բռնությունը և բացառումը, որոնց բախվում են երիտասարդները՝ անկախ դրանց հիմքից[6]

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Որոշակի միջոցներ են նախատեսված՝ հնարավորություն տալու բոլոր երիտասարդներին ակտիվ դեր ստանձնել հասարակությունում առանց որևէ խտրականության:				
Հաշվի է առնվում որոշ երիտասարդների՝ խտրականության և խարանի հետ կապված առանձնահատուկ խոցելիությունը, և մշակվում են միջոցներ այդ խնդրի լուծման համար:				
Կիրառվում են հասարակության տարբեր շերտերի մարդկանց համախմբմանը և բարիդրացիական հարաբերությունների խթանմանն ուղղված միջոցներ, այդ թվում՝ երիտասարդական աշխատանքի միջոցով:				

Դրական միտումներ, որոնք կնպաստեն հետագա առաջընթացին

Բարելավման և հնարավոր հետագա գործողությունների ոլորտներ

6. Ինչպես հստակ նկարագրված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածում, կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով սահմանված ցանկացած այլ հիմքով:

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Իրավական հիմք

- Անդամ պետություններին երիտասարդների համար իրավունքների հասանելիության վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2016)7 հանձնարարական
- Անդամ պետություններին Եվրոպայի խորհրդի՝ կրթություն հանուն ժողովրդավարական քաղաքացիության և մարդու իրավունքների կրթության խարտիայի վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)7 հանձնարարական

Ցուցանիշ 1

Երիտասարդական քաղաքականությունը խթանում է և դյուրին դարձնում իրավունքների արդյունավետ հասանելիությունը բոլոր երիտասարդների համար և վերացնում է հասանելիության ցանկացած իրավական, վարչական և փաստական խոչընդոտ[7]

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է որակյալ կրթության և վերապատրաստման հնարավորությունների հասանելիության խոչընդոտների վերացմանը բոլոր երիտասարդների համար:				
Երիտասարդներին օգնում են հաղթահարել դժվարությունները, որոնց նրանք բախվում են կայուն աշխատանքի ապահովման ոլորտում, և կյանքի վտանգավոր իրավիճակների բացասական հետևանքները:				
Միջոցներ են նախատեսված՝ երիտասարդների սոցիալական և առողջապահական ոլորտների հետ կապված հատուկ կարիքների բավարարման նպատակով:				

Ցուցանիշ 2

Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է երիտասարդների համար նրանց իրավունքների հասանելիության բարելավման համակարգված մոտեցմանը՝ համագործակցելով քաղաքականության բոլոր համապատասխան ոլորտներում միջազգային, ներպետական, տարածքային և տեղական մակարդակներում

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Երիտասարդական քաղաքականությունն ապահովում է մարդու իրավունքների կրթության և հանուն ժողովրդավարական քաղաքացիության կրթության հասանելիությունը երիտասարդների համար:				
Երիտասարդության հարցերում ներգրավված շահակիր կողմերը քաղաքականության համապատասխան բոլոր ոլորտներից միմյանց հետ հաղորդակցվում են և համագործակցում՝ իրավունքների հասանելիությունը երիտասարդների համար բարելավելու նպատակով:				
Վերանայվում են գործող և նախատեսվող օրենսդրությունը կամ ծրագրերը, որոնք խթանում և երաշխավորում են երիտասարդների համար իրավունքների հասանելիությունը, և ներդրվում են օժանդակության լրացուցիչ միջոցներ:				

Դրական միտումներ, որոնք կնպաստեն հետագա առաջընթացին

Բարելավման և հնարավոր հետագա գործողությունների ոլորտներ

7. CM/Rec(2016)7 հանձնարարականում ներառված այդ իրավունքների հասանելիությունը, որոնք լուսաբանվել են միջամտության այլ ոլորտներում (օրինակ՝ մասնակցություն, ներառում), լինի դա ցուցանիշների կամ գնահատման չափանիշների մակարդակում, այստեղ, մասնավորապես, չի քննարկվում:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Իրավական հիմք

- Իրավական հիմք Անդամ պետություններին երիտասարդական աշխատանքի վերաբերյալ Նախարարների կոմիտեի CM/Rec(2017)4 հանձնարարական

Ցուցանիշ 1

Երաշխավորվում է որակյալ երիտասարդական աշխատանքի ստեղծումը և հետագա զարգացումը և ակտիվ կերպով աջակցություն ստանում տեղական, տարածքային կամ ներպետական երիտասարդական քաղաքականությունում

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Մշակվում են երիտասարդական աշխատանքին սատարող ռազմավարություններ, կառուցակարգեր, օրենսդրություններ, կայուն կառուցվածքներ և ռեսուրսներ:				
Բոլոր երիտասարդների համար երիտասարդական աշխատանքի հավասար հասանելիությունը խթանվում է այլ հատվածների միջև արդյունավետ համակարգման և համապատասխան քաղաքականության միջոցով:				
Երիտասարդական աշխատանք կատարողները և երիտասարդներն ակտիվորեն ներգրավված են երիտասարդական աշխատանքի զարգացման գործում:				

Ցուցանիշ 2

Վճարովի և կամավոր հիմունքներով երիտասարդական աշխատանք կատարողների կարողությունները բարձրորակ երիտասարդական աշխատանքի ապահովման երաշխիքն են

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Մշակվել է կարողությունների վրա հիմված ճկուն և համաձայնեցված համակարգ վճարովի և կամավոր հիմունքներով երիտասարդական աշխատանք կատարողների կրթության և վերապատրաստման համար:				
Ցանկացած այդպիսի համակարգ հաշվի է առնում գոյություն ունեցող փորձը, նոր միտումները և ասպարեզները, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի բազմազանությունը:				
Շահակիրները, նրանց թվում նաև երիտասարդական աշխատանք կատարողները և երիտասարդները, ներգրավված են այդ համակարգի մշակման գործում:				

Դրական միտումներ, որոնք կնպաստեն հետագա առաջընթացին

Բարելավման և հնարավոր հետագա գործողությունների ոլորտներ

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրավական հիմք

- Իրավական հիմք Բանաձև (91) 20 Երիտասարդական քարտի մասին մասնակի համաձայնության վերաբերյալ՝ Եվրոպայում երիտասարդության շարժունակության խթանման և դյուրացման նպատակով:
- Անդամ պետություններին երիտասարդության շարժունակության վերաբերյալ Նախարարների կոմիտեի R (95) 18 հանձնարարական

Ցուցանիշ 1

Երիտասարդական քաղաքականությունը նպաստում է երիտասարդության շարժունակությանը, մասնավորապես՝ Եվրոպային պատկանելիության զգացումը խթանելու նպատակով

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Քաղաքականության հատուկ դրույթները, ուսուցման և բացահայտման հատուկ ծրագրերը և հնարավորությունները խրախուսում են երիտասարդներին լինել շարժունակ սոցիալական, մշակութային, կրթական և տնտեսական առումներով:				
Մատչելի են տեղեկատվական և խորհրդատվական ծառայություններ երիտասարդության շարժունակության հնարավորությունների վերաբերյալ:				
Շարժունակության նախագծերը խթանում են Եվրոպային պատկանելիության զգացումը, մասնավորապես՝ միջմշակութային ուսուցման ոլորտում Եվրոպայի խորհրդի արժեքների և սկզբունքների միջոցով:				

Ցուցանիշ 2

Երիտասարդական քաղաքականությունը խթանում է երիտասարդության շարժունակության որակյալ ծրագրերի մշակումը

Ինքնագնահատման չափանիշներ	Այո	Ոչ լիովին	Ոչ	Լավ գործելակերպի օրինակներ
Շարժունակության նախագծերը համապատասխանում են որակի սկզբունքներին, ինչպես սահմանված է «Երիտասարդական ոլորտում ուսուցման շարժունակության որակի վերաբերյալ Եվրոպական խարտիայով» նախատեսված ուղենիշներում:				
Երիտասարդության շարժունակության հարցերի վերաբերյալ գիտելիքները և լավագույն գործելակերպերը գեներացվում են և տարածվում՝ քաղաքականության ավելի արդյունավետ լուծումներին նպաստելու նպատակով:				

Դրական միտումներ, որոնք կնպաստեն հետագա առաջընթացին

Բարելավման և հնարավոր հետագա գործողությունների ոլորտներ

Երիտասարդներին եվրոպական արժեքներին և, մասնավորապես, Եվրոպայի խորհրդի հիմնական արժեքներին (մարդու իրավունքներ, իրավունքի գերակայություն, ժողովրդավարություն) հաղորդակցելու անհրաժեշտությունը կենսական նշանակություն ունի: Եվրոպայի խորհուրդը մշտապես նպաստել է եվրոպական համընդհանուր արժեքների և Եվրոպային պատկանելիության զգացումի վրա հիմված երիտասարդական քաղաքականության ընկալմանը:

Այս համատեքստում է, որ Եվրոպայի խորհրդի երիտասարդության հարցերով ղեկավար կոմիտեն (CDEJ) պաշտոնապես ընդունել է այս ինքնագնահատման գործիքը երիտասարդական քաղաքականության մշակման համար:

Այս գործիքը մշակվել է՝ օգնելու անդամ պետություններին ինքնուրույն գնահատել երիտասարդական քաղաքականության իրենց համապատասխանությունը ԵԽ չափանիշներին և հիմք ծառայելու երիտասարդական քաղաքականության ինքնուրույն մշակման համար: Հուսով ենք, որ այս գործնական գործիքը հնարավորություն կընձեռի անդամ պետություններին և շահակիր այլ կողմերի առաջ քաշել և տարածել լավ գործելակերպերը և գնահատել առաջընթացը ժամանակի ընթացքում:

PREMS 110219

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

Youth – Jeunesse

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE